


THE DICKRIS PUBLISHING CO. 628 Third Avenue, NEW YORK CITY.



ՏԻԳՐԻՍԻ ՍԻՒՆԱԿՆԵՐԸ ԲԱՑ ԵՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԱՌՋԵՒՆ:

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱՉԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ, ԹԻԻ 40

ՆԻՒ ԵՈՐՔ, ՇԱԲԱԹ, ՕԳՈՍՏՈՍ 13, 1898

ԳԻՆ 3 ՍԷՆԹ

ՀԱՅ ԿՍՄԱՒՈՐ

Երկու շաբաթ առաջ Պոսթոնէն կամաւոր գնաց Երզնկայի Տիգրան Թաւրիզեան անուն 27 տարեկան երիտասարդը, որ միացած է Մասաչուսէթս նահանգի 7րդ զորաբանակին:

ԱՉԳԱՅԻՆ

Չարմանօք կը լսենք թէ Տ. Վաղինակ և Տ. Մաշթոց վարդապետներն, Սարաճեան վարդապետի ընտրութեան մասին եղող ժողովներէն վերջ, միասին Ունսաքէթ գնացած են եղեր և անկէ հետագային Վեհ. Հայրեկի՛ խնդրելով որ չ'ըլլայ թէ Եպիսկոպոս մը զրկէ հոս՝ առանց իրենցմէ կանխաւ լսած ըլլալու: Այս լուր վերապահութեամբ կը հրատարակենք՝ յուսալով որ լոկ սարաճայնութիւններ են:

Վառնայի թերթերուն մէջ կը կարդանք՝

Կը լսենք թէ Էջմիածնի մէջ նոր ձեռնարկուած երեք թրքահայ եպիսկոպոսներէն մին նշանակուած է Թաւրիզի, միւսը Սպահանի և երրորդը Ամերիկայի հոգևոր հովիւ:

Բայց ո՞վ Ամերիկայի Հայոց Համարներէն այս երրորդ եպիսկոպոսն:

Պայտլ Հանգէլ ծանուցուեր է Պատրիարքարանի թէ, ամերիկեան միսիօնարներուն հետ ընաւ կապ եւ յարաբերութիւն ունեցած չէ նշանաւոր ոճրագործ Ֆէրքէն: Ստուգուած է նաև որ այս հրէջը Ամերիկայի Ընկղմական կողմէ 15-20,000 անուս, պարզամիտ անգամներէ բաղկացեալ յարանուանութենէն օգտուեր է, ինչպստ կայ որբերու տրուած գումարները իր անանական կիրքերուն գոհացումին ծառայեցնելու համար: Տակաւին ստուգութեան կարօտ լուրի մը համաձայն՝ ոճրագործը գտնուած ու ձերբակալուած է:

Իզմիրի «Բուրիէ տը Զմիւռն» լրագիրը հետեւեալ կը գրէ՝ ի պաշտպանութիւն այս անամօթ ստահակին:

«Այսօր սուտերու և զրպարտութեանց ենթակայ եղած է մեր էն «պատուաւոր» քաղաքացիներէն մէկը: Մեզմէ շատեր կը ճանչնան Ֆէրքէնը՝ իբր պատուաւոր տէր մարդ, և հիմա՞յ երբ պատկառելի տարիք մ'ունի, ընտանեաց հայր է և եպիսկոպոս, իր վրայ կը ձգեն նողկալի ոճիր մը, սուտ ամբաստանութիւն մը, ո՞վ գիտէ ինչ թագուս վրէժ լուծելու համար: Արդէն Ֆէրքէն «ըստ բացած է...»:

Ս. Պատրիարքը որոշած է երկու նոր որբանոցներու բացումը. մէկը Սեբաստիոյ Անապատի վանքին մէջ, միւսը Մալթիոյ մէջ, քառասունական որբի համար: Նախնական ծախքերու գումարէն զատ Պատրիարքը իւրաքանչիւր որբի համար յատկացուցած է տարեկան վեց ոսկի, որ պիտի հայթայթուի բարեսէր անձերու խոստացած նպաստներէն: Տիվրիկի մէջ ալ

տեղական հասոյթներով որբանոց մը բացուած է 20 որբի համար: Պատրիարքարանը որբանոցներու կազմակերպութեան և մատակարարութեան վերաբերեալ հրահանգ մը պատրաստեր է, որ պիտի ղրկուի թէ՛ որբանոցներու տնօրէններուն, թէ՛ գաւառ. վարչութիւններու և թէ՛ այս հաստատութեանց օժանդակող անձերուն:

Չորոյց կայ, կ'ըսեն արտասահմանեան թերթեր, թէ Պոլսոյ Ս. Պատրիարքը պիտի հրատարակէ այս օրեր, որովհետև կ'ըսուի թէ Թուրք կառավարութիւնն կ'ուզէ Սահի կաթողիկոսն, կամ Բարթոլոմէոս և կամ Ալեքեան սրբազանն անուանել այդ պաշտօնին:

Իզմիրի զգուելի դէպքէն վերջ Պոլսոյ աղագային հիւանդանոցէն ոչ նուազ սոսկալի լուրեր կը լսուին: Մանչ և աղջիկ որբեր «անխոստովանելի ակտիւ» վարակուած են եղեր: Որբանոցի տեսուչը Պ. Մալթեան Մասիսի մէջ կը գրէ թէ այդ ակտերէ վարակեալներն երեք պատանիներ են միայն, և թէ հասակը կարգաւորութեան մէջ խոստովանած են թէ ակտը փոխանցած է իրենց հիւանդանոցի պաշտօնեայնէն մէկը: Աղբիւսնապօլսէն Մշակի գրուած թղթակցութիւնն մը կ'ըսէ սակայն թէ «նոյն ինքն բժշկներէն մէջն էլ կայ եղեր այդ արարքներն անողներ, որոնց զոհ են եղել նաև աղջիկ որբեր: Մեր կեղծաւոր Աղագային վարչութիւնն և ամենինց առաջ Օրմանեանը, որոնք սագի աղաղակներ էին բարձրացնում Ֆէրքէնի վրայ, ի՞նչ են սուտ այս անլուր խայտառակութիւններին, որոնք Կ. Պոլսում, իրանց աչքին տակ տեղի են ունենում»:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Մինչ Ուաշինկթընի Գաղղիական դեսպանի միջոցաւ Սպանիա գլուխ կը ծռէ Նախագահ Մաք Բիլլիի պայմաններուն, անգին Մանիլայի առջև սպանիական զօրքերն անցեալ կիրակի գիշեր յանկարծ կը յարձակին ամերիկեան զօրքերուն վրայ. անակնկալ կռիւր կը տեւէ երեք ժամ. ամերիկացիք, թիւով սպանիացիներէ շատ պակաս, յաղթող կը հանդիսանան, 11 մեռակ և 38 վիրաւորներ միայն ունենալով. իսկ թշնամայն կորուստը կը կարծուի թէ ծանր է: Ո՞վ գիտէ: * * *

Տաճիկ կառավարութիւնն Միացեալ Նահանգաց պատասխան մը տուած վերջապէս: Կոստանտնուրու և այլ առթիւ ամերիկացոց կրած 125 հազար տոլարի ծանօթ ֆեսիսի համար Թուրք կառավարութիւնն ըսած է թէ «մենք այդ ֆեսիսներուն պատասխանատու չենք, որովհետև ժողովուրդն էր ընողը, հետեւաբար չենք կրնար վճարել»: Մի և նոյն պատասխանը տրուած է եւրոպական քանի մը տէրութեանց ալ:

Թէ ո՞րչափ անտեղի պատասխան է այս՝ աւելորդ է ըսել, եթէ կառա-

վարութիւն մը պատասխանատու չէ իր ժողովրդի ըրածին, ո՞վ ուրեմն պատասխանատու է անոր. մնաց որ վերջի կտորածներուն ու աւերներուն հեղինակը հաստատուած է թէ Թուրք կառավարութիւնն ինքն էր:

Մէջն մարտանաւն ալ Սպանիացիք ըսին թէ իրենք չի պայթեցուցին: Բայց Տօներու այդ ըսածը ինչ արժէք ու հետեւութիւն ունեցաւ, վերջի պատերազմը փառաւոր կերպիւ կը պատմէ արդէն:

Լրագիրներ կ'ըսեն թէ Նախագահ Մաք Բիլլի, զինադադարը հրատարակելէ վերջ, մտադիր է Ծով. Սամալընը Պոլիս ղրկել՝ ամերիկացոց պահանջը թնդանօթներու սպաննալեօք գանձելու, վասն զի Սուլթանի ականջը այնչափ խլացած է այսօրինակ խնդրներու համար, որ թնդանօթի համոզելէ չեզուէն զատ ուրիշ ձայն չի կրնար անոր լսելի դառնալ...:

Ամերիկեան կառավարութիւնն՝ ասկէ վերջ 10 հազարի տեղ 25 հազար ծովային, և 25 հազարի տեղ 100 հազար ցամաքային զօրք պիտի պահէ: * * *

Անցեալներն վէլսի իշխանն Լորտ Լոչայլարի տունէն դուրս եկած ատեն ինչով ծուռը կտորեց: Մեր վեհ. Սուլթանին իր ցաւակցութիւնն հեռաւորելով՝ առաջարկած է Պալատին առաջնակարգ վիրաբոյժ ձէլալ էֆէնտին Լօնտոն ղրկել գահածառանգին ոտքը դարմանելու համար: Թրքական խո՞ր տգիտութիւնն... Ո՞չ Գերմանիա, ոչ Գաղիա և ոչ ուրիշ ո՛ր է է քաղաքակիրթ աշխարհ այսօրինակ տղայական առաջարկ չ'ըրաւ. մինչ Սուլթանն... Աստուած ողորմի, կարծեց թէ իր մէկ համբալ վիրաբոյժը կըրնար Լօնտոնի Փրօֆէսորներն գերազանձել: * * *

Ձինաստանի մէջ երկաթուղեաց մենաշնորհին համար Անգլիոյ և Ռուսիոյ մէջ մեծ վէճ ծագած է. կը վարցուի որ, եթէ յարաբերութիւնք քիչ մը ևս ձգտին, պատերազմ ըրատարակուի: Մենք Հայերս վախնալու բան մը չունինք այսօրինակ պատերազմներէ: Յաջողութիւն: * * *

Ֆորթնայթլի Բըվիլի վերջի թիւին մէջ «Սպանիացի մը» ստորագրութիւն կրող մի յոգեւած մեծ հրամանութեամբ կը պատկերացնէ այն տըխուր վիճակ, որուն պիտի ենթարկուի յոգեւածագրի «տխուր և շատ սիրելի» Հայրենիք՝ Սպանիա, այս չարագուշակ պատերազմէն վերջ:

Յօդուածագիրն կ'ըսէ թէ Սպանիոյ հասարակաց պարտքը, պատերազմական ծախքերով բարձրացած, պիտի հասնի երկու երկիւրի տոլարի, որոյ տարեկան շահը, 140 միլիոն տոլար, հազիւ կարելի պիտի ըլլայ վճարել երկրի բոլոր եկամուտով, որ տարին 150 միլիոն տոլարը չէ անցած լուսագոյն տարիներու մէջ: Այս չոր թուանշաններն ի հարկէ պարզ սնանկութիւն կը նշանակեն: Քիւպայի, Փօրթօ Րիբոյի և ուրիշ կղզիներու կորուստը Սպանիոյ եկամուտն

ի հարկէ զգալապէս պիտի պակսեցնէ, և անոնցմով ապրող շատ մը պաշտօնեաներն անգործ պիտի թողու՝ երեսի վրայ: Պատերազմէ վերջ 100 հազար զինուոր բացը կը մնան. 30 հազար պաշտօնեայ Հանգստի ոտճիկ ստացողներու ցանկին վրայ կ'աւելնան. և իրաց այդ վիճակին մէջ յեղափոխութիւնն անխուսափելի կը դառնայ: Սակայն յեղափոխութիւնն բաւական չէ երկրին գանձը լեցնելու համար: Նոր կառավարութիւնն, լի նի հանրապետական կամ այլ ձեւ, յօդուածագիրն չի կարծեր թէ պիտի կրնայ փրկել իր «սիրեցեալ Սպանիան» այն կորստի անդունդէն, որոյ եզերաց վրայ կը գողղայ այժմ: Այսպէս Սպանիա, որոյ շնորհիւ օր մը Արևմտեան կիսագունար բացուեցաւ աշխարհի առջև, կորուստի կը մատնուի՝ Արևմտեան ազգի մը հզօր ապտակով: Եւ ո՞վ էր յանցաւորը:

ՎԵՆԵՉՈՒԷԼԱ ԵՒ ՄԻՆԱՍ ՁԵՐԱԶ

Գոհունակութեամբ կը կարդանք Լ'Առմէնիի մէջ թէ Վենեզուէլայի հանրապետութեան նախագահ Զօր. Իկնասիօ Անտարտոյ Պուսթօ Տէլ Լիւպէթմատորի երրորդ աստիճանի շքանշանն ու ժապաւէտը շնորհած է Տ. Մինաս Ձէրագի: Այս առթիւ նոյն հանրապետութեան Արտաքին Գործոց Նախարարութեան կողմէ գրուած նամակէ մը կ'իմացուի թէ այս՝ բարձրագոյն նշանն է որ կը տրուի Վենեզուէլայի Միացեալ Նահանգներուն կողմէ՝ Հայրենեաց, մարդկութեան և քաղաքակրթութեան համար աշխատող մշակներուն:

Կը շնորհաւորենք այս առթիւ Լ'Առմէնիի մեծայարգ Սմբագիրն, յուսալով որ օր մը իւր աշխատութիւններն պիտի պատկուին շատ աւելի բարձր շքանշանով մը — ազգային երախտագիտութեամբ:

ՏՊԱՐԱՆ ՏԻԳՐԻՍԻ

Այս տպարանի մէջ կը տպագրուին թէ՛ Հայերէն և թէ՛ Անգլիերէն լեզուաւ ամեն տեսակ այցետոմս, նամակագրութիւն, հրատարակչի, շրջաբերակներ, տետրակներ ևն: Մեր գները գոհացուցիչ են. տպագրութիւնն՝ մաքուր: Ուրիշ քաղաքներէ եկող յանձնարարութիւնք կը կատարուին փութով ու խնամով:

Յ. ՍԱՐԱՑԵԱՆ

ՀԱՅԱԳՈՐԾ 262 Պալրի, Նիւ Եորք, Փրինս և Հալսթըն փողոցներու միջև Պատիւ ունի ծանուցանել թէ պատուական ալիւր և ամեն տեսակ ամերիկեան և արեւելեան հաց կը վաճառէ գոհացուցիչ գներով: Հայ ընտանիքներու, ճաշարաններու և նպարավաճառներու մասնաւոր ուշադրութիւնը կը հրատարակուի այս մասին: Յանձնարարութիւնք փութով կը կատարուին: Մի անգամ փորձել հաճեցէք, և վստահ ենք որ գոհ պիտի մնաք: 4-1



ՇԱՐԱԹՎԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
Կը Հրատարակուի ամէն Շաբաթ օրեր,
ՏԻԳՐԻՍ Հրատարակչական Ընկերութեան կողմանէ:

Յ. ՂՈՒՄՐԻԿԵԱՆ, ԳԱՆՁԱՊԵՏ.
ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ ՈՒ — ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ
ՔԱՆԱՏԱԹԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՐ

Table with 2 columns: Price (Տ. Սթ.) and Subscription rates (Տարեկան 10 Փրանք). Includes rates for 1 year (50¢) and 6 months (40¢).

Մտար կամ նամակ ուղղել հետեւեալ հասցէին՝
To the DICKRIS PUBLISHING CO., 628 Third Ave., New York City.

Entered at the Post Office at New York as Second-Class Mail Matter.

ՆԻՒ ԵՈՐԻ, ՇԱՐԱԹ, ՕԳՈՍՏՈՍ 13 1898.

Խ Մ Բ Ա Գ Բ Ա Կ Ա Ն Ք

ԱՐՓԻԱՐ ԳԱՆՁԱՆ Մ'Է Ազգային սկանաւոր գը-
րագէտ Տ. Արփիար Ար-
փիարեանի ղէմ երկար
ատենէ ի վեր քառամեկի ամբաստանութիւն մը կայ հրա-
պարակի վրայ, որ ցարդ կը մնայ լոկ ամբաստանութիւն՝
առանց ո՛ր և է փաստի:

Ամբաստանող խմբի պարագլուխն, որչափ կրցած ենք
հասկնալ, Հրանդն է՝ Արփիարի հին աշխատակիցներէ ու
բարեկամներէ մին Այս վերջինս կ'ամբաստանէ «Նոր Կեն-
քի» խմբագիրն իբր մատնիչ և դաւաճան. և կ'ըսէ թէ
«ազգային գոհողութեամբ» տղուամաններ ձեռք ձգուած
են ամբաստանութիւնն հաստատող: Հարկ չի կայ ըսել թէ
համբաւուր հրատարակագրի մը և մանաւանդ ազգային
կուսակցութեան մը պարագլխին ղէմ ասկէ աւելի ծանր
ամբաստանութիւն մը կարելի իսկ չէ մտածել: Եւ սակայն
Արփիար իրօք դաւաճա՞ն մ'է:

Այս է ընդհանուր հարցն, որ կը լսուի ամեն կողմէ.
Հարց մը զոր պէտք է լուծել կարելի եղածին չափ շուտ.
զի խնդիրն պարզ անհատի մը խնդիր չէ, այլ ազգային
բարոյական խնդրոյ գոյն ու կարեւորութիւն ունի: Վառ-
նայի Իրաւունքն ու Շարժումը այս առթիւ փոթորիկէ մը
բռնուած են ժամանակէ մ'ի վեր. այս լրագրաց վերջի թի-
ւերը լեցուն են «պատասխան», խօսք հասկնալ, վերջի
բառ, շարժումն, եղբայրասպան կռիւ, երկտող մը, պա-
ռակտիչ հոգի» և այլ խորագրեր կրող յօդուածներով,
որք շատ անգամ վիրաւորիչ լեզու մը կը գործածեն իրա-
րու ղէմ՝ բուն խնդիրը մոռնալով բողոքովին — Արփիար
իրօք դաւաճա՞ն մ'է:

Տ. Արչալի Զօպանեան՝ ինչպէս նաև ընդհանուր ժո-
ղովուրդը Հրանդի ամբաստանութեանց հաւատարմ համար
զօրաւոր փաստեր, տղուամաններ կ'ուզեն: Եւ ամբաս-
տանեալն ինք կը պահանջէ պատուոյ ատենան մը կողմել ու
դատուիլ անոր առջև: Արչալե իրաւացի պահանջներ են
ասոնք, վասն զի առանց փաստի ամբաստանութիւն մը,
բարոյական ոճիւր է:

«Արփիարը ինքն է, կ'ըսէ վահան Շահրիման, յօդ-
ուածի մը մէջ, որ զնահատելի քաղցութեամբ յառաջ կը
նետուի, զրպարտիչ մարդասպան կ'անուանէ իր հակառա-
կորդները և կը պահանջէ որ պատուոյ ատենան մը մէջ զըն-
նութիւն մը բացուի» և կը չարցնէ. «ասկէ աւելի արդար
պահանջ, աւելի կտրուկ և դիւրին միջոց կայ արդեօք»:

Տ. Զօպանեան ուրիշ յօդուածի մը մէջ խնդիրն կը
պատկերացնէ այսպէս. «Ա.ը, նախկին եղբայրակից Բ.ին,
յանկարծ կ'ենէ մութին մէջ կը զրպարտէ Բ.ը, անոր ա-
նունն ու կենքը կը թունաւորէ, և այս ամբողջը կ'ընէ,
առանց շօշափելի փաստ մը երևան բերելու: Բ.ը կը պա-
հանջէ որ պատուոյ ատենան կազմուի, դրական փաստեր ե-
րևան բերուին և խնդիրը լուծուի: Զուլու մը ըլլալու էի
Բ.ին կողմը չ'ընելու համար: Եւ կատարեցի իմ պարտ-
քը՝ խղճիս առջև, սկզբունքներուս առջև: Հիմայ, ո՛վ
որ ալ գրէ, ի՛նչ որ ալ գրեն, լուծութիւն պիտի պահանջէ:
Պիտի սպասեմ պարզապէս, ուրիշ շատերու հետ, պատուոյ
ատենանին և տղուամաններուն: Թող վերջապէս երևան
ելլեն տղուամանները, իրենց վաւերականութիւնը հաս-
տատող օրինակ որ պայցոյցներով:

Իբր հեռուէն դիտող ու խնդրողն հետաքրքրուող ան-
կողմնակալ ոք՝ մենք կը կարծենք թէ իրաց այս վիճակին
մէջ ամբաստանող անձին կամ անձերուն վրայ կը ծան-
րանայ մեծ պատասխանատուութիւն—իրենց փաստերն ու
տղուամաններն մէջ բերել գէթ պատուոյ ատենան մը առջև:
Այո՛, ի լոյս ածելու է ամեն բան. այս է ժողովրդի ար-
դար պահանջն այս խնդրոյ մէջ: Եթէ Արփիար դաւաճան

մ'է, ազգին շահերն կը պահանջեն զայն ազգային շրջանէ
զուրս հանել բողոքովին. իսկ եթէ անմեղ է, այսպիսի
քստմեկի ամբաստանութիւն մը անոր գլխին վրայ կ'ախ-
ուած պահեն անարդարութեան կատարումն ու վիճակը
է անշուշտ:

Արփիար, որ մօտէն ճանաչելու պատիւը չունինք, ազ-
գային կուսակցութեան մը գլուխն է այսօր, անհատապէս
տաղանդ մ'է, ակնածելի գրագէտ մ'է մեր մէջ, որուն
խօսքն ու կարծիքը նշանակութիւն ու կշիռ ունի Հայ ազ-
գին մէջ ամեն տեղ: Անոր ղէմ եղող այսօրինակ ամ-
բաստանութիւն մը յետաձգելու չի գար: Ամբաստանող-
ներն պէտք չէ որ թող տան Հայ ժողովրդի մէկ մեծ
մասին հետեւիլ ու ակնածիլ մէկի մը, որոյ Արփիար դի-
մակին տակ թիւթիւնձիէֆ մը կայ պահուած:

Գիմակը վար առէ՞ք, եղբայրներ, եթէ դիմակաւոր
մ'է այս մարդ, որպէս զի ամենքս ալ ճանչնանք զայն մօ-
տէն: Հայ ազգը իր ծոցին մէջ ալ չի կրնար իժեք սնու-
ցանել: Մարմնոյն փտած մ'աւր կտրուի է, որպէս զի ա-
ռողջ անդամներն ալ չի փտտին: Ինչի՞ կ'սպասէք:

ՊԱՐՃ ՕՓԻՍ ԵՒ ՀԱՅԻ Պարճ Օֆիս այն դժուար
տեղն է, ուր գաղթական
աղքատ ճամբորդներն կը
ենթարկուին խիստ քննութեան մը՝ ընդունուելէ առաջ:
Եթէ ո՛ր և է աղքատ ճամբորդ անյարմար սեպուի ազատ
դրօշակի պաշտպանութիւնն վայելելու, ազատ չի թողուի
ազատ եղեմի դռնէն ներս մտնել. այլ գաղթական վար-
չութեան կողմէ ետ կը զրկուի՝ հին աշխարհի մէջ երթալ
տառապելու համար:

Թէ ո՛րչափ եղծուներ կը դործուին այս հաստատու-
թեան մէջ, մեր նպատակը չէ քրքրել. և թէ քանի՞ քանի՞
Հայ երիտասարդներ, ընդունելի փախստական կարիճներ
ու ընտանիքներ ետ զրկուած են այս Օֆիսէն չնչին պատ-
ճառներու համար, կարելի չէ թելել Հոս, բայց կրնանք
վստահարար ըսել թէ՛ բարդատմամբ՝ ուրիշ ազգերէ շատ
աւելի՛ Հայ նորեկն է որ կ'արգելուի նոր եղեմի դռնէն
ներս մտնել, այն եղեմէն, որոյ դրօշակը պաշտպանու-
թիւն և հաց կը խոստանայ ամեն տառապալներուն ու
ճնշուած փախստականներուն:

Մեր համոզման ղէմ է, և չենք ալ ուզեր բնաւ որ
Հայ ժողովուրդը նոր Աշխարհ փոխադրուի, բայց չենք ալ
կրնար անտարբեր մնալ, երբ կը տեսնենք բացարձակ ան-
իրաւութիւն Հայ ճամբորդին ու խեղճ գաղթականին ղէմ:
Հրեայն՝ որոյ ճակտին աստուածասպան լինելու յաւի-
տենական դատաւճիռն դրօշմուած է դարերէ ի վեր, և ո՛ր
կ'ատուի ուրիշ ամեն ազգերէ աւելի, դիւրութեամբ ներս
կը մտնէ Հոս. աղտոտ Իտալացին, Արաբն ու Սուրիացին,
որք, Հայերու չափ ժողովրդի համակարանք չեն վայելած
և չեն վայելել, բարդատմամբ շատ քիչ դժուարութեան
կ'ենթարկուին, որովհետեւ Հայ շոտ. . . . Եւ միթէ մեր ճա-
կատագրն է հալածուիլ ամեն տեղ:

Այս հայածուին առանց պատճառի չէ անշուշտ: «Չի լա-
ցող մանկան կաթ չեն տար». չի բողոքողը, պաշտպան չ'ու-
նեցողը կը հալածուի ամեն տեղ, Ամերիկայի մէջ ալ շատ
անգամ:

Պարճ Օֆիսի մէջ ամեն ազգ իր ներկայացուցիչն ու-
նի, թարգմանն ունի Հոս. ասոնք իրենց նորեկներուն դիւ-
րութիւն կ'ընծային վար չի դրուելու համար, եւ ուրիշ
Աստուած գիտէ թէ ինչեր ալ չեն ընել, իրենց Հայրենա-
կիցներն ետ զրկել չի տալու համար: Բայց Հայուն ո՛չ ոք
կայ Հոս պաշտպան. ինչպէս ուրիշ տեղեր՝ նոյնպէս Պարճ
Օֆիսի մէջ անտէր անտերտական է Հայը:

Երբ այլ ազգի մը, ո՛ր և է պատճառաւ, վար դրուի
Փաղթական վարչութեան կողմէ, նոյն ազգի բարեգոր-
ծական այս կամ այն ընկերութիւնն իւր ներկայացուցիչ
միջոցաւ շատ անգամ կ'ազատէ զայն դիւրութեամբ: Բայց
երբ Հայ մը վար դրուի՝ լեզու գիտցած չ'ըլլալէն յառաջ
եկող պատճառներու համար, մեր մէջ բանտարկեալն ա-
զատելու չափ կարող չի կայ մարմին մը, որոյ ճայնն կը-
շիռ ու նշանակութիւն ունենայ Պարճ Օֆիսի պաշտօնէից
քով:

Եւ պատուաբե՞ր է այս վիճակ. կը վայելէ այսպէս
լքանել մեր նորեկն ու թողուլ զայն որ խաղալիք դառ-
նայ կարգ մը օտարազգի թարգմաններու շահախնդրու-
թեան: Անտարբերութեան մէջ ընկղմած կը քնանանք
մենք, մինչ անդին դժբաղդ Հայը՝ իր բոլոր հարստութիւ-
նը փճացուելէ վերջ՝ հազու Նիւ Եորք կը հասնի, ու Պարճ
Օֆիսէն դուրս չ'ելած՝ ետ կը զրկուի նորէն: Ինչո՞ւ հա-
մար — ինչու համարը չի կայ, զի անտարբեր գտնուած
ենք ցարդ:

Չարագիտալ մարդիկ բարոյական պարտականութիւն
կ'ըզգան ո՛չ միայն իրենց ազգակիցներուն ճեռնտու ըլ-
լալ՝ մանաւանդ այս տեսակ խնդիրներու մէջ, այլ և հոգ
տանիլ իրենց նմաններուն, և օգնել անոնց: Աստուծոյ
սիրտն ըլլայ, ամօ՞թ է մեզ, բան մ'ալ մենք ընենք: Այս
մասին, եթէ ո՛չ իբր մարդ, գէթ իբր Հայ լալ միևնոյն
Հայրենեաց զաւակ:

Աղուեսուց որջք
գոն եւ թռչնոց
երկնից՝ բոյնք, այլ
Որդւոյ Մարդոյ
ոչ գոյ ուր դիցէ
զգլուխ իւր:
ԱԻԵՏԱՐԱՆ

Հայ ազգն ալ Մար-
դոյ Որդւոյն նման մի
տեղ չունի այս ան-
ծայրածիր երկրագնդիս վրայ: Աղ-
ուեսները որջ ունին, թռչունները՝
բոյնք, բայց Հայը տուն մ'ունի կորս-
ուած, Հայրենիք մը՝ օտարներէ յա-
փքտակուած: Աշխարհի վրայ չի կայ
անոր համար վայր մը սեփական, ուր
կարենայ գլուխը դնել և ննջել
խաղաղ:

Հայ գաղթականութիւններն՝ ա-
ւելի տխուր պատկերներ կը ներկա-
յացնեն այս մասին դիտող աչքերու:
Հայրենիքի մէջ Հայ անհատը գէթ
մահուելէ վերջ տեղ մ'ունի սեփա-
կական գլուխը դնելու համար, բայց
տարագիր գաղթականը մահուելէ
վերջ անգամ ապահով գերեզման մը
չունի օտար երկիրներու մէջ: Հայ
գաղթականը չի գիտեր թէ ո՛ր պի-
տի հանդէին իր սակորներ, և ո՛ր օ-
տար փոսին մէջ:

Մեր գաղթականութիւնն իւր
հաստատուած օրէն ի վեր հարկէ մահ
աւելի կորուստներ ունեցած է Իս-
րուամբ: Թէ ո՛ր են ասոնց գերեզ-
մանները, ո՞ր գերեզմանատան մէկ
անտեսաւ անկիւնն — ո՛չ ոք կրնայ
ըսել: Եթէ ո՛չ մահեւուն, գէթ շա-
տերուն վերջի հանգստարանը այժ-
մէն կորսուած է մեռելներու ընդար-
ձակ քաղաքներու մէջ: Հոս՝ չի մե-
ռած շատ անգամ ազգութեամբ կը
կորսուինք, իսկ մեռելէ վերջ՝ ոս-
կորներով ու անխնով կը խառնուինք
ուրիշներու հետ յաւիտեան, անանկ
որ սպազային ոչ ոք կրնայ առիթ ու-
նենալ մեր շիրմին վրայ աղօթք մը
կամ ծաղիկ մը թողուլ:

Երբ ննջեցեալ Հոս կ'ունենանք
Հոս, կը շուարինք ընդհանրապէս թէ
ո՛ր թաղելու ենք զայն. եթէ հան-
գուցեալն դրամ ու բարեկամ չու-
նի, կառավարութիւնն անոր մարմի-
նը անտէր աղքատներու յատուկ գե-
րեզմանատան մէջ կը հորէ տեղ մը
աննշանակ ու անյիշատակ: Իսկ եթէ
նա դրամ ունի և բարեկամ, ստիպ-
ուած կ'ըլլանք բարձր գներ վճարել
ար մը հող ձեռք ձգելու համար՝
օտարներու գերեզմանոցին մէջ, ուր
մէկ սերունդ վերջ գուցէ անկարելի
դառնայ ննջեցեալին հետքն ու տե-
ղը գտնել, եթէ երբէք զայն փրկու-
ող մը գտնուի:

Եւ ինչո՞ւ համար փոխանակ՝ մէ-
կիկ մէկիկ՝ բարձր գներ վճարելու,
միանգամ ընդմիջու ընդհանուր հան-
գանակութեամբ սեփական վայր մը
չ'ունենանք, գէթ մահուելէ վերջ
ամեն Հայու համար գլուխը դնելու
տեղ մը ապահոված, ու աղքատ ազ-
գայիններուն համար ազգային գե-
րեզման մը պատրաստած ըլլալու հա-
մար:

Կարևոր հարց մ'է այս, որ ամեն
անհատի համար կենսական նշանա-
կութիւն ունի: Ազգային գերեզմա-
նատուն մը ազգային եկեղեցիին չափ
կարևոր է՝ մանաւանդ այս պարագա-
ներու տակ. և գերեզմանն եկեղեց-
ւոյ մէկ մասն կը կազմէ արդէն:
Մենք ամենքս ալ այս կեանքի
մէջ կը տքնինք ու կը շարժարուինք
ապագայի մը համար: Բնակելու հա-
մար տուն կը շինենք. ճմրան համար
պաշար կը պատրաստենք. ցուրտին
դէմ կուրելու համար կանխաւ պա-
րաստութիւններ կը տեսնենք: Եւ քա-
նի որ մահը մեր ամենուս ալ ան-
խուսափելի սպազան է, շիտակ չէ՞ որ
այժմէն մեզ համար սեփական հան-

գըտտի վայր մը պատրաստենք: Ո՞վ մեզմէ, եթէ լրջութեամբ մտածէ, օտարներու մէջ խառնուելու գաղափարին հետ կրնայ հաշտուիլ: Եթէ չենք կարող մեր գերեզմաններն մեր հարց ու պատուը հողին վրայ պատրաստել, գէթ աշխատենք մեզ սեպհական տեղ մը հաստատել ու ամփոփ մնալ: Ինչպէս որ մեր առողջութեան ժամանակ իրարու մօտ ապրելու բնական փոփոք մը կայ մեր մէջ, այդպէս ալ մահուանէ վերջ ամփոփ մնալու իղձ մը պահուած ըլլալու է մեր քով: Հայը հայուն քով թերեւս աւելի կանգիտա կը ննջէ: Հայ ոսկըր գուցէ հայ ոսկրով կը միտթարուի հողին տակ:

Ուր դարդապետի և քանի մը ազգայիններու նախաձեռնութեամբ այս խնդիր սկսած է արդէն յուզուիլ ժողովրդի մէջ, և յանձնախումբ մը կազմուած է արդէն՝ խորհուրդն իրականութեան փոխելու պաշտօնով: Օգնենք ասոնց ամենքս ալ, զի ամենքս ալ հանգստավայր մը կ'ուզենք անպատճառ: Եթէ ատեն մը չենք կրնար կանգնել, գէթ գերեզման մը պատրաստենք:

Ո՞վ գիտէ, գուցէ դարերէ վերջ, որ մը Հայկական Հանրապետութեան կողմէ հնախոյզներ նոր Աշխարհ այցելին ու իրենց նախահարց բեկորներուն իտես դանձ Հայոց ազգային հին գերեզմանատան մէջ, ու հոն ազգային յիշատակարան մը կանգնեն մեզ համար:

Տուն չունինք, տեղ չունինք, թափառական չոզ չունինք, Աստուածորդւոյն պէս զլուխ դնելու վայր չունինք: Բայց, բարեկամներ, գերեզման մը պատրաստենք՝ գէթ այս օտար հողին մէջ, մահուանէ յետոյ, զլուխ դնելու սեփական տեղ մ'ունենանք: Հ. Է.

ԴԱՌՆԱՆՔ

(Շարունակութիւն և վերջ)

Թէ օրէ օր որչափ կ'իյնանք բարոյապէս — այս մասը բացատրելու համար ներողամիտ եղէք որ անձնական մէկ տպաւորութիւնս ձեզ ներկայացնեմ: Մտունթ ձօփ փարբը տեսնելու բաղբը ես ալ ունեցայ. ատոր անունը միայն պարտէջ է. խմելու, բաղբախաղ (խումար) խաղալու, պարելու, անօգտակար բաներու համար դրամ վասնելու և ստոր կարգի ազատութիւններուն մէջ յնալու մասնաւոր տեղ մ'է միայն: Գործարաններու մէջ Ֆիզիքապէս փճանալով ձեռք բերուած ջնջին գումարը՝ հող, գործաւորին ձեռքէն խլելու համար ամեն միջոց խորհրդեն: Գժբաղդարար հայերուս մեծ մասն ալ ամեն կիրակի իրեն զրօսավայր ընտրած է այդ պարտէջը. ըսէ՛ք, կ'աղաչեմ, ի՞նչ բարոյական զարգացում կարելի է սպասել ժողովուրդէ մը, որ իւր չը գործած օրն ալ հող կ'անցնէ: Քանի որ ամերիկեան դասակարգերու դրութիւնը կայ և մեզ հայերուս համար ալ ընդհանրապէս այդ շրջանակն անմատչելի է, մեր բարոյական անկումը անխուսափելի է: Պարզ իրողութիւն մ'է, թէ միջավայրին ազդեցութենէն վրիպելը գրեթէ անհնար է. քանի որ մեր միջավայրը՝ աշխատութեան ատեն՝ գործաւորը, կիրակին ալ այդ պարտէջի յաճախորդներն են, ալ մեր բարոյական զարգացումը հանդերձաւ աշխարհին մնացած բան մ'է:

Նիւթապէս չենք յառաջանար, Ֆիզիքապէս կը քայքայինք, բարոյապէս ալ կ'իյնանք. ուրեմն ի՞նչ ընենք. — դառնանք մեր մայր երկիրը. մեր

սովորութիւններն ու մեր շրջանակը միայն կրնան մեր ազգային բարեմասնութիւնները պահել. մեր ազգային ընտիր առանձնայատուութիւնները հոս կը փճանան. դառնանք հոն, ցանկալի հայ աշխարհը, և մեր ձգելիք այս օտար երկրին հետ, անկէ ստացած մեր թերութիւններն ալ մեր ետին ձգենք:

Թերեւս շատեր առարկեն թէ ի՞նչ պէս դառնանք երկիր մը՝ ուր ամեն բան անստոյգ է: Ասոր պատասխանելու համար մի՛ պահանջէք որ հայ կնոջ յատուկ եղած ամօթխածութեան սահմանէն անցնիմ. սա չափ միայն ըսեմ թէ կոտորածներու սոսկալի արհաւիրքները աչքերովս տեսայ եւ այն խոր ապաւորութիւններուն տակ դեռ կ'ապրիմ. այդ քստմեկի օրերուն մէջ կեանք, ընտանիք և զաւակներ անստոյգ էին, բայց այս օտար երկրին մէջ ալ այն տեսակ փճացումներ կան, որ մարդ կը փորձուի մահը նախապատելու համարել: Կոտորած մեզ ազգովին ընալին չ'ըրաւ, բայց զաղթականութեան կամայցէն առաջ բերած փճացումին դեղ չ'ըլլար, մասնաւոր այս տեսակ երկրի մը մէջ. հոս ամբողջովին կ'ըսեմ, կը փճանանք: Շատեր ամուրի են, ոմանք ալ ամերիկահիներու հետ ամուսնացած են. այս երկուքէն ալ ազգը իր ձեռքերը կը լուսն' երբ հոս կը մնան. շատ քիչ ալ հայ ընտանիքներ կան, որոնց սերունդը թերեւս օր մը Հայ ըլլալն անգամ իրեն ամօթ սեպէ: Հակառակ դրած խտտութեանը, զաւակներն այս օր իրարու հետ անգղիերէն կը խօսին. ի՞նչ հաւատք ունենամ թէ Հայ սրտով պիտի մեծանան: Ըսէ՛ք, կ'աղաչեմ, այս զաղթականութիւնն փճացման մէջ է թէ չէ:

Մեր ազգին անցեալ զաղթականութիւնները աչքի առջև բերէք. ո՞ր է Հնդկաստանի մեծ զաղթականութիւնը, որ ձեմարան և տպարան ալ ունինք. ո՞ր մնաց Մոլտավալաբայի և Լեհաստանի հարիւր հազարաւոր ընտանիքներէ կազմուած զաղթականութիւնը. ո՞ր մնաց կրեւտի զաղթականութիւնը. դեռ մեր օրերուն մէջ ծախուեցաւ այդ կողմին մէջ հայոց ձեռքով շինուած եկեղեցիներ: Այդ մեծ ու պղծակի զաղթականութիւնները խառնուեցան երկրի տիրող ցեղին հետ, և մեզ համար փճացան բոլորովին:

Ուրեմն դառնանք մեր մայրենի երկիրը և մեր ձեռքով շինենք մեր քանդուած օճակը. դառնանք այն երկիրը, որուն լեզուն ու սովորութիւններն գիտենք. դառնանք այն երկիրը, որուն օղը առողջարար ու ջուրն ալ անուշ է. դառնանք այն երկիրը, ուր կան մեր նախնեաց սրբազան յիշատակները. դառնանք հոն, ուր մեր սիրելիներու նուիրական գէթ գերեզմանները կան. դառնանք հոն, ուր մեր վրայ գթացող ու լացող բարեկամներ ու ազգականներ ունինք. դառնանք հոն, ուր մեզ սիրող սքրտեր կան. դառնանք, դառնանք եւ Հայաստանի սուրբ հողին վրայ փրչենք մեր վերջի շունչը և մեր ոսկորները թող խառնուին մեր հայրերուն սուրբ նշխարաց հետ:

Մեր տունն ու տեղ, մեր ազգութեան արմատը հոն է. այս երկիրը մեզ կ'սպասանայ ազգուրացութիւն և փճացում: Մեր ժողովրդային երգիչի տողերը կը յիշեմ՝ «Մտան արմատով է ծառ, տունն հիմամբ է տուն. սինլըզը կը մնամ ստոր, ու ատած, բայց ես չեմ լինիր երբէք ազգուրաց»:

Ոչնչանալէն սոսկանք. դառնանք, դառնանք, դառնանք:

ՏԻԿԻՆ ԶԵՐՏԻԿԵԱՆ

Մ Ա Ն Ր Ա Ն Ո Ւ Ր Ք

—Տ. Հ. Արզումանեան Ատրմս Մէմօրիլը եկեղեցւոյ մէջ քարոզեց, Յուլիս 31ի կիրակի օրն՝ Պատ. Սազոյեանի տեղ: Տ. Արզումանեան շեշտեց Հայրենիք վերադառնալու խնդիրն ու խոր ազաւորութիւն ձգեց իր ունկնդիր ժողովրդեան վրայ:

—Տիկին Հ. Մ. Քիրէշճեանի (մայր Տ. Հ. Մ. Քիրէշճեանի) իր դասեր՝ Տիկին ճգնաւորեանի ու թոռանց հետ քաղաքս հասաւ անցեալ շաբթու:

—Թուրք կառավարութեան դէմ պահանջ ունեցող մի քանի հայ քաղաքացիներ, որոնց խնդիր Ամերիկայի ընդհանուր պահանջին հետ մէկ կ'ուղղուէր անորոշ կը մնայ, շաբթուս մէջ դիմում ըրին նորէն Ուաշինգթոնի կառավարութեան՝ մասնաւոր փաստաբանի մը միջոցաւ: Ասոնք մտադիր են նաև ներկայանալ այս մասին Մր. Ըսթրաւզի, Պօլսոյ նորընտիր դեսպանին, որ պիտի մեկնի մօտերս:

—Լինի Որբախում ընկերութիւնը կը փափաքի թղթակցութիւն մը հաստատել ուրիշ նոյնանպատակ ընկերութիւններու հետ՝ նիւթական և բարոյական մեծ ոյժ մը գոյացնելու համար: Այսպիսի թղթակցութիւն մը հաստատել փափաքող խումբերն՝ կրնան գրել առ Մ. Ք. Վարթերեան, թիւ 24 Պրուքլին Ըսթրիթ. Լին, Մասս:

—Մէլքէցի Պ. Օնիկեան անուն անձը մէկ ամիս չափ Փօրթ Բէյմպրիմի Գէսարիկցոց տունն խոհարարութիւն ընելէ վերջ, ամսոյս մէկին անկայացեցր է՝ հացազործին, կաթնալաւանակին և հայ յաճախորդներու կանխիկ վճարած դրամներն իր հետ տանելով:

—Մեր Ուսթըրէ ստացած վերջի թղթակցութիւնն ժամանակին չէինք կրցած ստանալ՝ անցեալ շաբթու ծանուցանելու համար թէ՛ Յուլիս 31ի կիրակի օրն տեղի ունեցեր է նոյն քաղաքի մէջ Որբախում ընկերութեան մէկ հանդէս, ուր խօսած են Տ. Մաշթոց վարդապետ, Պատ. Պէննէեան և Տ. Պ. Յովակիմեան: Նոյն հանդիսին մէջ ընկերութիւնն ունեցեր է 30 նոր անդամներ, ու հանգանակութիւն մը բացուելով՝ 30 տարի չափ դրամ գոյացած է: Այս ընկերութիւնն Ուրբախի Գիւլէի Ս. Գէորգ վանուց որբանոցին մէջ որբ մը կը պահէ այժմ իր հաշուոյն:

—Անցեալ կիրակի Հայ Բողոքականաց եկեղեցւոյն մէջ քարոզեց Պատ. Պուղտանեան: Վաղը պիտի քարոզէ Պատ. Ֆիլեան:

—Շաբթուս մէջ Նիւ Եորք հասաւ Մշեցի քահանայ մը՝ Տէր Գասպար Տէր Վարդանեան անուն, որ յառաջիկայ կիրակէ օր Ս. Պատարագ պիտի մատուցանէ՝ մասնաւոր կարգադրութեամբ՝ Ս. Ոսկերեան եկեղեցւոյ մէջ:

—Ուր դարդապետի նախաձեռնութեամբ Ազգ. Հոգաբարձութիւնը հօթը անդամէ բաղկացեալ յանձնախումբ մը ընտրեց շաբթուս մէջ՝ ազգային գերեզմանատուն մը գնելու համար հարկ եղած կարգադրութիւններ ընելու պաշտօնով: Այս յանձնախումբը հրաւիրանօք ընդհանուր ժողով մը տեղի պիտի ունենայ այս երեկոյ ինտիմիտեղ ժողովասրահին մէջ, Յրգ ափսիւ և Չրդ փողոցի անկիւնն:

—Չըլտիէն կը գրեն թէ վերջերս հոն հասած է 18 տարեկան Ուրֆացի Յակոբ անուն պատանի մը, որ Ֆէրքէն ճիւղի որբանոցին սաներէն մին է եղեր: Յակոբ Չըլտեցոց (Հետաքրքրութիւնն հազեցնելու չափ) տեղեկութիւններ տուած է Ֆէրքէնի

Որբանոցի մասին:

—Ուսթըրի մեր թղթակցը կը գրէ. «Նորէն Ս. Փրկիչ եկեղեցւոյ գոցուելու գաղափարն յարուստիւ առաւ. յանձնախումբը որ ընտրուած էր եկեղեցւոյ գործոց առ ժամանակակից կերպիւ հոգ տանիլ՝ մինչև նոր հովուի մը գալը, պատճառներ մէջ տեղ բերելով՝ կ'ուզէ գործէ քաշուել, և տեղերին պարագայի մնալու համար, նոր հոգաբարձութիւն մը ընտրելու ձեռնարկեցին, սակայն ժողովրդի սակաւութեան համար չի յաջողեցան: Ոմանք կը յուսադրեն թէ յառաջիկայ կիրակէ մեծ բազմութիւն մը ներկայ պիտի գտնուի ու լաւ կարգադրութիւն մը պիտի լինի վերջապէս: Ինչ որ ըսեն անհաւատալի է, քանի որ անտարբերութեան ոգին տիրապետած է ժողովրդին մէջ: Ամսոյս 26ին Ս. Փ. եկեղեցւոյ պարտոց իբր տոկոս՝ 70 տոլարի պէտք մը կայ. եկեղեցւոյ գանձանակը պարագայ է. ժողովուրդը անտարբեր է. թէ ո՞վ պիտի վճարէ այդ, ընթերցողը թող ըսէ: Եթէ Ուսթըրի ժողովուրդը իր այս կործանարար անտարբերութենէն սթափելով կարգադրութիւն մը չ'ընէ, պարտատիրոջ կը մնայ կարգադրութիւն մը ընել:

ՊԵՏՐՈՍ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ ԵՒ ՅՈՎՀԱՆ ԵՍՓԱՍ ԲԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇԱՐԱՆ
Թիւ 154 Իսթ 27րդ փողոց, Նիւ Եորք
Նոր կարգադրութիւն, Նոր վարչութիւն եւ Նոր ճաշարան

Պատիւ ունին ծանուցանել հասարակութեան թէ ամսոյս 7էն սկսեալ գնած ու բոլորովին կերպարանափոխ րրած են այս ճաշարանն՝ ներքին վարչութեան տեսակառէ: խոհարարութիւնն, մաքրութիւնն, գործառնած թորմ մսի և նպարեղէններու տեսակն վստահ են թէ պիտի գնահատուի ընդհանուր ժողովրդէն. բայց վստահ ըլլալու համար թէ ամեն ինչ առաջնակարգ և զոհաբերող է այս ճաշարանի մէջ, կը հրաւիրուին ազգայինք փորձել գէթ մի անգամ:

Եկէ՛ք և տեսէք:

ԿՈՐՈՍՒՍ ԵՒ ԳԻՏ

Տիկին Կիլիճ Օտուռ գիւղացի Յովհաննէս Դօբեան անուն 20-25 տարեկան երիտասարդին հասցէն ու տեղը կը փնտուռի բարեկամի մը կողմէ՝ Դօբեան կոտորածէն վերջ Պօլսէն Ամերիկայ եկած է: Գրել լրագրոյս խմբագրութեան:

ԲԱՆԱՍՏԵՂՈՒԹԵԱՆՑ ՄԱՍԻՆ

Նկատելով որ ամեն կողմերէ շատ մը բանաստեղծութիւններ կը շրկուին մեզ, և նկատելով որ ՏԻԳՐԻՍԻ մէջ լ' տեղւոյ անձկութեան պատճառաւ չենք կարող գանոնք հըրատարակել, որոշած ենք՝ մեր ընդունած այս ոտանաւորներն՝ մեծաւ մասամբ՝ առանձին հատորի մը մէջ ամփոփել, պայմանաւ որ ամէն փափաքող անձ իր ոտանաւորին համար հարկ եղած շարելու, էլէքթրոթայի շինելու և տպագրելու ծախքերն վճարել յանձն առնէ կանխաւ:

Հեղինակներն իրենց իւրաքանչիւր ոտանաւորին համար մէկ կամ երկու օրինակ պիտի ստանան Հրատարակուած հատորէն՝ երբ լոյս տեսնէ: Այս հատորը պիտի անուանուի «Ժողովրդական քնար»:

Մանրամասնութեանց համար գրքել լրագրոյս խմբագրութեան:

ՆՈՐԱՎԷՊ ԱԶԳԱՅԻՆ

ԱՆՄԵՂ ԶՈՂՆԵՐ

Դ.

Մի քանի րոպէ Հաստափոր պարտնեբը լուռ մուռջ իրար երես նայեցին...

Պարոն, նախ մենք ձեզ չենք ճանաչում, երկրորդ՝ ո՞վ գիտէ վաղ կամ միւս օրը մենք ալ նոյն դրութեան չենք ենթարկուիլ...

Շատ լաւ խորհուրդ էք յղացել, վրայ տւին միմայն:

Ուրեմն, մերժում է՞ք, յանդիմանական կերպով հարցրեց Սամոթ:

Չայնքի մեծամասնութեամբ խնդրել լուծուած է. մնացածը դուք գիտէք:

Ներողութիւն, ձեր ուրախութիւնը խանգարեցի. աւելի կծու արտասանեց Սամոթ և երեսը շուռ տալով՝ դուրս գնաց:

Աղբ, լաւ ազատեցիք մեր օձիքը. ինչ է, եթէ ամեն դիմողի բաւարարութիւն տանք, վաղը ստիպուած՝ մուրացկանի լաթերով նորանց շարք պիտի անցնինք:

Հայրէ, մեր քէֆին նայե՛ք. մարդ ստեղծել է մեռնելու համար աշխարհի մի ծայրն ենք եկել, դարձեալ չենք ազատուում կոծներէ ձեռքից:

Պր. Թամաղա, ո՞ւմ կենացը պիտի խմէինք, ասաց տանուէր աղան, և բաժակները լեցրեց շամպայով:

Պմենք, խմենք, մեր ազատարար կենացը. խոպոտ ձայները իրար խանոնեցան, բաժակները ջրի-ջրիկացրին և մի քանի րոպէ առաջ տրուած վճիռը հեղուկի հետ կուլ գրեց...

Ե.

Երկու ժամուժ սարսափելի լուրը կայծակի արագութեամբ տարածուել էր գաղթական հայերի մէջ:

Սամոթ կամուստ նկարագրելով Սուրէնեանի անցեալն ու ներկան, խնդրեց մէկից, որ կառավարութեան դիակառքը բերել տայ: Բանորները ընդդիմացան Սամոթի խնդրին:

Սամոթ համառօտ նկարագրելով Սուրէնեանի անցեալն ու ներկան, խնդրեց մէկից, որ կառավարութեան դիակառքը բերել տայ: Բանորները ընդդիմացան Սամոթի խնդրին:

Բարձր կարգալով՝ ասաց. նորա վերջին ցանկութիւնը այս է, Պարոններ, խնդրեմ հանգուցեցա՛յի կամքին չհակառակէք:

Իրականքերը շարժւեցան, խուճրը հետեւեց կառքին՝ մինչև դիակները միմը միւսի ետեւից դիակները լջեցրին այն փոսը, ուր մի շարքի առաջ ձգուած էր Սուրէնեանը:

(Վերջ)

ԾԱԽՈՒ ԽԱՆՈՒԹՆԵՐ

ձՕՆ, ՍՏԵՓԱՆ և ԹՈՎՄԱՍ,

Նպարավաճառք

590 Ըսփրինկ ըսթրիթ, Ուէսթ Հո-

պոքըն, Նիւ Ճէրզի:

Հայրենիք վերադառնալու նպատակ ունենալով՝ պարտաւորած ենք մեր Ուէսթ Հոպոքընի մէջ ունեցած նպարավաճառի խանութը ծախել, որ կը պարտուանէ իր մէջ շատ վաճառելի տեղական և արևելեան ապրանք:

Գնել փափաքողք հաճին զրել կամ դիմել յիշեալ հասցէին: 4-1

Հնակարկատ կօշիկակարի խանութըս, թիւ 95½ Ուէսթ ԸսփրինկՖիլտ փողոց, Պոսթօն,

Հայրենիք վերադառնալուս պատճառաւ պիտի ծախեմ շուտով: Ծախաւէտ գործ ու շատ յաճախողներ: Ս. ԹԱՍԱՐԵԱՆ:

Տիրա Սաղայեան կը ծանուցանէ թէ իւր 27 Նիլընտ փողոց, Պոսթընի ճաշարանը վաճառել կուզէ՝ տարբեր գործով զբաղլլ որոշած ըլլալուն համար: Փափաքողք պարտին դիմել յիշեալ հասցէին:

ՏՕԹԹԵՕՐ Ա. Յ. ԳՐԼԸՃՃԱՆ, Բժիշկ և վիրաբոյժ, 314 Ծօմբթ Ա.Ֆիլի, Իւնիըն փառքին առջև, Պոսթըն, Մասս.

Հիւանդ կընդունի առաւօտեան ժամը 8է ց10. կէս օրէ վերջ՝ ժամը 2է ց4. Իսկ երեկոյ՝ 6է մինչև 8:

Կարօտ հայերն ձրի կը դարմանուին կէսօրէ վերջ ժամը 2է մինչ 4: —Թէլէֆօն. 840 Թրէմօնթ—


ՏԻԳՐԱՆ ՔԻԻՓԵԼԵԱՆ Միմակ Հայ Սափրիչն ի Նիւ Եորք 607 3րդ Ա.Ֆիլի, 39ի և 40ի մէջ

ՅԱԿՈՒ ԲԱՐԱԿԵԱՆ Ամբրիկեան և Արևելեան ընդհանուր Նպարավաճառ—Կրօնքրիս, Թիւ 45 Էքսչէնճ փողոց, Ուսթըր:

Կը ծանուցանէ թէ գներու շափաւորութեան և նպարեղէններու ընտիր տեսակի մասին կը գերազանցեալ ձրիչ նպարավաճառներն:


Յ. ՂՈՒՄՐԻԿԵԱՆ, Թիւ 628 3րդ Ա.Ֆիլի, Նիւ Եորք:

Կը ծանուցանէ թէ, իր ներկայացուցիչ համբաւուր մի վաճառատան,




կարող է ծախել ամէն տեսակ հեծելանիւներ խիստ աժան գներով: Գնել փափաքողք եթէ իրեն դիմեն գոհ կը մնան միշտ:

Ա. ԹՓՈՒՉԵԱՆ, ԿՕՇԿԱՎԱՃԱՌ ԵՒ ԿՕՇԿԱԿԱՐ, Թիւ 239 Իսթ 26րդ փողոց, Նիւ Եորք:



Այս խանութին մէջ կը վաճառուին ամէն տեսակ կօշիկներ խիստ աժան գներով: Մեր Հայրենակիցներէ փորձ մը միայն կը խնդրենք: Նոր ապսպրուած կօշիկներ կը կարենք ձեռքար եւ վայելուչ կերպով: Կը նորագնէք հին կօշիկներ շափաւոր գներով: Ուրիշի մը երթալէ յառաջ ինձ եկէք անգամ մը. եւ վստահ եղիք որ շատ գոհ պիտի մնաք: 239 Իսթ 26րդ փողոց Արանց կօշիկներ \$1.25է մինչև \$5.00 Կանանց " \$1.25է " \$2.50 Տղայոց և աղջկանց կօշիկներ \$0.50է " \$1.50



ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԳԻՏԱՐԱՆ

9երորդ Տպագրութիւն Մաքսուէլ Սըմըրլիււ Հրատարակիչ

Կը բաղկանայ 25 մեծադիր Հատորներէ, որք կը վաճառուին բաժանորդագրութեամբ միայն: Սոցա գրին է, Կտաւեայ կազմ 62 տող. 50 սէնթ կէս կաշիակազմ 87 " 50 " Փառակազմ 100 "

Առաջին տեսակէն կը զրկուի անոնց որք յանձն կառնեն վճարել ամիսը 2 տարի 60 սէնթ: Երկրորդին ամսավճարն է 3 ու կէս տարի, Իսկ վերջինին՝ 4 տող:

Այս Համադիտարանն Ամբրիկեան միակ արտօնեալ տպագրութիւնն է. մնացեալք անկատար են ամեն կերպով: Մանրամասնութեանց համար դիմել Նմբագրութեանս:

Հ Ի Ր Զ Օ Լ Ա ՍՍԱԳԻ ԴԵՂ




HIRSOLA A HAIR FOOD FEEDS, STRENGTHENS, CLEANS AND ADORN THE HAIR, DESTROYS ALL DISEASES OF THE SCALP AND REMOVES DANDRUFF. IT NEVER FAILS!

Կը զօրացնէ, կը մաքրէ, կը փայլեցունէ մազերը ու թափելը կը դադրեցնէ: Կը բուժէ նաև մորթի հիւանդութիւնն ու կը մաքրէ թեփերը:

Միանգամ փորձել բաւական է սաղեղին արժէքը դիտնալու համար, որ արևելեան խոտերէ պատրաստուած է յոյժ հաճելի մի հատով: Կը ծախուի րոտր զեղադործներուն քով:

Կարելի է ստանալ նաև ՏԻԳՐԻՍԻ րնկերութենէն:

Կը վաճառուի նաև Տ. Յ. Բարա կեանի քով, թիւ 45 Էքսչէնճ ըսթրիթ, Ուսթըր, Մասս:



Յ Ա Կ Ո Ւ Ռ. Ն Է Ր Պ Ե Կ Ե Ա Ն (Ներկայացուցիչ) ՈՒԻԼԻՐՄ Պ. ԳԵՕՂԷՐ ԵՒ Ե Ղ Բ Ա Ր Ց, Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն Ի Ք Գրինի, Օղիի, ողելից Ըմպիեայ: Թիւ 202, 204 Իսթ 29րդ փողոց Նիւ Եորք, Ն. Ե.

Պատու ունի ծանուցանել արգոյ Հասարակութեան թէ իւր վաճառած ըմպիլիքներն ոչ միայն փորձաւ և անխարդախ են, այլ և դիւրամասջելի են ամէն գասակարգի անձանց: Այս վաճառատան մէջ կը ծախուին Եւրոպական, տեղական, Բալիֆորնիայի և տաճկական ամէն տեսակ ուիսքի, օղի, գրինի, շամբանի, մասթիլայ, գարեջուր, պրանտի, ափսիսի և այլն, իրենց ամեն տեսակներով: Փափաքողաց գներու յուցակը՝ զրկուի առանց ո՛րէ մասիքի: Յանձնարարութիւնը կը կատարուին ամենայն ճշգրտութեամբ և փութով: Բաղաքին մէջ ապրանքներն ձրի կը զրկուին, իսկ քաղաքէ դուրս զրկուածներուն ծախքը գնողներուն վրայ է:

Ըմպիլիքներ կը վաճառուին թէ՛ մեծ և թէ՛ փոքր քանակութեամբ, իրենց յատուկ գներով: (Հօլտէյլ անտրիթէյլ)

Մեր յաճախողք երբ չի հաւնին իրենց գնած ըմպիլիքներուն, յանձն կառնեք զայնս փոխել, եթէ պակասած ու փաստուած չըլլան: Ըմպիլիքներ կը վաճառուին շիշով, կայքով, տակառով և յատուկ անուկներով որք կը պարունակեն 12 կամ 24 շիշեր:

Գրիմել յիշեալ հասցէին կամ Յ. Ն. ՆԵՐՊԵԿԵԱՆ, 535 ՈՒԷՍԹ 57րդ փողոց, Ն. Ե.

Ե. ԹԱԿԱԿՃՃԱՆ ԵՒ Պ. ԵԹԱՐԵԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇԱՐԱՆ

Թիւ 242 Իսթ, 41րդ փողոց

Պատու ունին ծանուցանել թէ, այս նոր ճաշարանն բացած են սա վստահութեամբ միայն թէ մաքրութիւն և ընտիր խոհարարութիւն միշտ կը գնահատուի Հասարակութեան կողմէ:

Միանգամ փորձել բաւական է մշտնջենական յաճախողք ըլլալու: